34. ՍՈՒՐԲ ԱԽՉԻԿ

Ախչիկըմ կսիրահարվի վեր ախքյատ տղի մը: Խեր, մեր չեն իտա ինոր, կուտան զանգին տեղըմ:

Ախչիկ ուր սիրականին խաբար կճամխի, կասի. - Մի վախենա՛, հար որ տեղ էրթամ, իմ խոսք խե քյե յի:

Ախչիյ կուտան իրկան: Խարսնիս կանեն կպըռծնեն, ախչիկ կտանեն մո փեսեն: Փեսեն կպառկի, ախչիյ չպառկե: Կկայնի չյուր լյոս աղոթք կանի, ցերեյն էլ աղոթք կանի, կիշեր-ցերեկ աղոթք կանի:

Մեկ օր, էրկու օր, մեյ շապաթ, էրկու շապաթ, մեկ ամիս, ախչիկ հա աղոթք կանի:

Իրկան խեր, մեր կուգյան, կասեն. - Ախչիկ, հա կիշեր-ցորեկ աղոթք կանես, ի՞նչ: Կիշեր մո քյո իրիյ պառկի, նոր էլմել ցերեկ աղոթք արա:

Ախչիյ կասի. - Ես աշխըրի մեղայ թըմախ չունիմ: Ցյուքյ աղեկութեն մ'արեքյ, ճեոկ տեղըմ շինեքյ, զի մեչ տրեքյ, չյուր իմ օրն մախու աղոթք անեմ, նոր մեռնեմ:

Մարթերն շատ զանգին կէլնեն, զատ տեղ ճեոչ կոնախըմ կշինեն, խարս կտանեն, կտնեն մեչ նոր շինած կոնխին, որ աղոթք անի:

Էտ խարսի տեղ խալվաթ տեղ ինգյավ: Խաբար կճամխի առճի սիրականին, թե՝ արի, կնա՛:

Էտ սիրական կբաշլայի էրթալ գյալ, տըրկըցներ կտիսնան: Կէրթան ուրենց տուն, կասեն, թե՝ ծեր խարսի մոտ ի՞նչ մարթ ի, կէրթա կուգյա:

Կասեն. - Մարթ չկա, ի՞նչ մարթ, մեր խարս սուրփ ի:

Վերճ կուգյան իրկան կասեն: Էն էլ կասի. - Էն սուրփ ի, ջանըմ: Էն ի՞նչ մարթ, ի՞նչ պան:

Կմնա քյանիմ'օր, որ խաբար կշատանա, շատըմ մարթեր կուգյան կասեն, իրիյ կասի. «Կիշերս էրթամ տիսնամ, խենքյ աղվորթ ի»:

Կէրթա փենջարից գյախտիկ կիրիշկա, կտիսնա, որ խա՛, խըլղի ասած աղվորթ ի:

Կառնի կամեն, կկայնի վեր տռան, կասի. - Մարթն ինչ կախ էլնի տյուս, զանեմ, ըպանեմ:

Կուգյա ժամանակ, մարթ կէլնի տյուս: Փեր կպոնի ծեռ, կէլնի տյուս: Էսա մարթ պիտի կամով զանի, սիրական փեր կուտա կամի առճև, կփախնի: Իրիյն էլ կամեն ծեռ, կլարի առճև: Կէրթան փողնի մը մեչ սիրահար զինքյ կթալի պատի էմեկել իրես, էգյեստերաայ մեչ կկուրիսի:

Կոլեր կուգյան իրկան կպոնեն, կտանեն հափս կանեն:

Էն կիշեր թաքավուրու խազինիյ փարա կգյոողյընվի, կթալեն վեր էսօր, կասեն. «Թաքավուրու խազինի փարեն տյու ես գյոողյե»:

Կասի. - Խա, ես եմ գյոողյե:

Կասեն. - Քյո ինգյըներ վո՞վ են, մի նշանյ տուր:

Կասի. - Աղեկ, կիրակի ծե նշանյ կուտամ:

Ինքյ-ինքյ կասի. «Կիրակի պատարաքյ ի, պիտի էրթամ ժամ, վով ինչ շատ ասվ:ված կանչի, ես էնոր պիտի նշանյ տամ, ասեմ իմ ինգյիր էսոնքյ են, էն շատ ասվված կանչողներ ին կնգյան պես սութ ասող կէլնեն»:

Կուգյա կիրակին: Կոլեր կառնեն, կասեն. - էրթանքյ քյո ինգյըներ նշանյ տուր, պընոնենքյ պիրենքյ:

Կէլնին կէրթան: Էտ մարթ զաֆթիերաայ կկայնընյուցի վեր ժամտան տռան, ինքյ կմտնի ներս: Մեչ ժողովրթյան կֆռա, կտիսնա՝ էրկու խուգյի սընտներ կթընտեն, կուլան, ծեռքյեր կպարզեն, որ կխասնի էրկինքյ, ասվծուն աղաչանքյ կինեն, ասվծուց ոգիլաքյ կանեն:

Ինքյ-ինքյ կասի. «Ես պիտի էլնեմ տուրս, էսա էրկու մարթեր նշանյ տամ, էսոնքյ էլ իմ կնգյան պես ուսթա են»:

Կէլնի տյուս, զաֆթիյեքյ կասեն. - Տեսա՞ր քյո ինգյըներ:

Կասի. - Խա՛, տեսա, ամա սընրեքյ չյուր ժամ առցիյվի, ծե նշանյ տամ, պոնեքյ տանինքյ:

Կկայնեն վեր ժամտան տռան, չյուր ժամ կառցիյվի, ժողովուրթ կէլնի տյուս, էտա էրկու մարթ նշանյ կուտա, կասի. - Գյեռսկո իմ ինգյըներ:

Կպոնեն կտանեն:

Կտանեն թաքավուրու մոտ, թաքավոր էտոնցան հափս կանի: Մեկ ամիս, էրկու ամիս խառց փորց կանի: Էտ էրկու մարթեր, որ նշանյ էր տվե, կասեն. - Խա՛, մենքյ ենքյ գյող, թաքավուրու խազինեն մենքյ ենքյ կտրե, ամա էսա մարթ խե մե չէր: Էսա մարթ խաբար չունի:

Թաքավոր կզարմանա, կկանչի էտա մարթուն, կասի. - Ի՞նչխ էլե, որ տյու կիտցիր ես, որ ընոնքյն են գյողեր:

Ուր գյլխու գյացած թաքավուրուն կպատմի որ. - Իմ կնիկ սութ տեղ աղոթք կաներ, ես էլ կնացի ժամ, ժողովրթյան մեչ ֆռացի, էսա էրկու մարթուն տեսա, որ էսոնքյ էլ իմ կնգյան պես սիրտ կթընտին, կուլին: Ես ինքյ-ինքյ ասի. «Վալլա, էսոնքյ էլ իմ կնգյան պես սութասան են, գյողն էսընքյան են, շուքյր ասվծու, որ սութ չէլսվ»:

Թաքավոր էտ մարթուն պաշխիշ կուտա, կճամխի, էն մեկելներաայ էլ կախել կուտա: